

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն №1

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2017 թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 12:00 տեղի ունեցած նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ ՀԳՊԱ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 24 անդամներից 21-ը (մասնակիցների ցուցակը կցվում է): Նիստին ներկա էր նաև ՀՀ ԿԳ Նախարար Լևոն Մկրտչյանը:

Առաջինը ելույթ ունեցավ ԿԳ նախարար Լ.Մկրտչյանը՝ ողջունելով և արդյունավետ ու բեղմնավոր աշխատանք մաղթելով հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ նա նշեց, որ Հոգաբարձուների խորհուրդն իր գործառույթներով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինն է և կարևորագույն դեր ունի բուհի արդյունավետ գործունեության և զարգացման հարցում:

Օրակարգային առաջին և երկրորդ հարցերի ժամանակ նիստը նախագահում էր Խորհրդի տարիքով ավագ անդամը՝ Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը: Օրակարգային երկրորդ հարցի քննարկումից հետո նիստը նախագահում էր Խորհրդի նորընտիր նախագահ, Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

Բացելով Խորհրդի անդրանիկ նիստը, Մ.Մինասյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի քննարկում և հաստատում:
2. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
3. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:

4. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի քննարկում և հաստատում:

5. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթի հայտարարում:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի քննարկում և հաստատում:

Մ.Մինասյանը նշեց, որ Խորհրդի աշխատակարգի նախագիծը տրված է Խորհրդի բոլոր անդամներին, ինչպես նաև նախապես ուղարկվել է էլեկտրոնային փոստով, և Խորհրդի անդամները կարող են հանդես գալ լրամշակումների առաջարկներով: Հարցի առնչությամբ ելույթ ունեցավ ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Վ.Մկրտչյանը՝ առաջարկելով նախագծում կատարել երկու խմբագրում.

ա) Խմբագրել նախագծի 2.8 կետի 2-րդ ենթակետը՝ վերաշարադրել «Խորհրդի անդամները պարտավոր են... իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀԳՊԱ շահերից» ձևակերպումը և ավելացնել ՀՀ շահերից ելնելու առաջնահերթությունը: Առաջարկվեց նախագծի 2.8 կետի 2-րդ ենթակետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Խորհրդի անդամները պարտավոր են... իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ և մասնավորապես ՀԳՊԱ շահերից»:

բ) Խմբագրել նախագծի 3.3 կետը՝ վերաշարադրել «Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3 պահանջով՝ խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում» ձևակերպումը և դարձնել ավելի ընթեռնելի: Առաջարկվեց նախագծի 3.3 կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3 պահանջով: Խորհրդի նախագահը պարտավոր է Խորհրդի նիստ հրավիրել համապատասխան պահանջը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում»:

Այլ առաջարկներ չհնչեցին, և ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի նախագիծը համապատասխան լրամշակմամբ դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հաստատել ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը:

**2. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:**

Մ.Մինասյանը խնդրեց առաջադրել «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի թեկնածություններ: Խորհրդի անդամներից ելույթ ունեցավ Կերպարվեստի ֆակուլտետի դեկան Է.Վարդանյանը, ով առաջարկեց Խորհրդի նախագահ ընտրել Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյան:

Այլ առաջարկներ չեղան, և առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 32-րդ կետով և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին:

**3. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:**

Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն առաջարկեց «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ՀԳՊԱ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մ.Այվազյանին: Այլ թեկնածություններ չառաջադրվեցին, և Մ.Այվազյանի թեկնածությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝

ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ՀԳՊԱ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մկրտիչ Այվազյանին:

**4. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի քննարկում և հաստատում:**

Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը տեղեկացրեց, որ ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգի նախագիծը տրված է Խորհրդի բոլոր անդամներին, ինչպես նաև նախապես ուղարկվել է էլեկտրոնային փոստով: Խորհրդի անդամները նշեցին որ ուսումնասիրել են նախագիծը և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չեն տեսնում:

Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն առաջարկեց հաստատել ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգի նախագիծը. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետով և ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 2-րդ ենթակետով՝ հաստատել ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգը:

**5. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթի հայտարարում:**

Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը նշեց, որ ՀԳՊԱ կարգավիճակի փոփոխությունից և ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգի պահանջներից ելնելով՝ անհրաժեշտ է հայտարարել ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթ: Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Խորհրդի անդամ, ՀՀ Մահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ով առաջարկեց՝ հիմնվելով ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգի պահանջների վրա, ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կազմակերպման համար 2017 թ. դեկտեմբերի 1-ին գումարել Խորհրդի նիստ:

Խորհրդի նախագահ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն առաջարկեց հայտարարել ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթ՝ ընտրության օր

նշանակելով 2017 թ. դեկտեմբերի 1-ը: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետով և ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1. կետով՝

ա) ՀԳՊԱ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:

բ) Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել ՀԳՊԱ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

գ) ՀԳՊԱ ռեկտորի ընտրությունն անցկացնել 2017 թ. դեկտեմբերի 1-ին:

Խորհրդի նախագահ՝



Խորհրդի քարտուղար՝



Տեր Նավասարդ  
արքեպիսկոպոս Կճոյան

Մկրտիչ Այվազյան

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի  
հոգաբարձուների խորհրդի՝ 2017 թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած նիստի

1. Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյան
2. Գագիկ Հարությունյան
3. Սարգիս Գրիգորյան
4. Գրիգոր Գրիգորյան
5. Արև Սամուելյան
6. Աշոտ Բաղդասարյան
7. Վահրամ Մկրտչյան
8. Կարեն Աղամյան
9. Մկրտիչ Մինասյան
10. Ռոբերտ Սուքիասյան
11. Էդիկ Կարսյան
12. Մկրտիչ Այվազյան
13. Էդիկ Վարդանյան
14. Սարո Գալենց
15. Փարավոն Միրզոյան
16. Ավետիք Ավետիսյան
17. Արման Ալավերդյան
18. Սոնա Պողոսյան
19. Յուրի Ներսիսյան
20. Մուշեղ Մուսաելյան
21. Էլեն Հարությունյան